Տաճկաստանից և կամ որև է այլ տեղից ուղարկել Պ. Բժ. Արամեանին որ և է կարևոր թէ տպագրեալ և թէ անտիպ նիւթ, վերոյիշեալ պարկայի մասին. թո՛ղ բարեհաճի ուղարկել հետևեալ հասցէով.

Caucas (via Batum) Saliani, Aramiantz

Մեծ. պ. Մ. Բարխուդարեանցը խնդրումէ հրատարակել հետևեալը.
Ներկայ 1888 թուին լոյս կըտեսնէ Մոսկուայում
«Հանդէս Գրականաց և Պատմաց»
երկհատոր ժողովածուն. Այս հրատարակութիւնը, որին մասնակցելու են մեր գրականութեան մէջ անուն ժառանգած հեղինակներ, ինչպէս Գամարջիանց և ուրիշները, նոյնպէս և շատ նոր ուժեր, պիտի բովանդակէ. վէպեր, պատկերներ, զրոյցներ, բանաստեղծութիւններ,—թէ ինքնուրոյն և թէ թարգմանական,—պատմական, քննադատական, մատենախօսական յօդուածներ, գիտութեան այս կամ այն ճիւղից մատչելի լեզուով քաղուածներ և այլն.

Առաջին գիրքը բաղկացած կը լինի 300 երեսից և լոյս կըտեսնէ յունիս ամսին. Բացուած է սստորագրութիւն միայն առաջին հատորի համար, որի բաժանորդագինն է Ռուսաստանում մէկ բուբլի յիսուն կոպէկ. իսկ արտասահմանի համար 4 ֆրանկ. Երկրորդ հատորի մասին առանձին յայտարարութիւն կը լինի, որովհետև մեզ դեռ ինքը ընդլայնելու.
Հրատարակչի հասցէն. Москва. Большая Дмитровка. меб. Ком. «Версаль», № 27.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

3 Փետրուարի. Սինոդից Գերապ. Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանցի տեղը Կարսի փոխանորդ նշանակուեց Բարեշնորհ Յուսիկ Վարդապետ Մովսիսեան. Կարսի շրջակայքում եղած Բուլանուղ, Ղևյուղուղ, Գեօրխանայ, Ներբին-Գեադիքլար և Գարմալու գիւղերի նոր եկեղեցիների շինութիւնն աւարտուած լինելով, նոցա օծումն էլ յանձնուեցաւ յիշեալ փոխանորդին.

---

5. Փետրուարի. Ճեմարանը, իւր ննջարանովն և հիւանդանոցով ապահովել տրուեցաւ Հրդէհի դէմ Ս. Պետերբուրգի ընկերութեանը 75000 բուբլով, իսկ ճեմար. մատենադարանն և կահկարասին—25000 բուբ. Տարեկան պէտք կլինի վճարել ապահովող ընկերութեան 313 ր. 5 կոպ.

---

8 Փետր. Դուշէթի Աղէքսանդր քահ. տէր Յովհաննէսեանց, յետ

կրկին քննութեան, ենթարկուում է վեց ամսեայ եկեղեցական ապաշխարանաց, իւր անզգոյշ վարուց համար։

—

10 Փետր. Կողբի գործակալ Յովսէփ քահ. տէր Յարութիւնեանց իւր կանոնազանց արարմունքների համար ենթարկուում է եկեղեցական ապաշխարութեան անսահման ժամանակով ուղարկուելով Խոր Վիրապու վանքը և նորա կատարած չհաս պսակը՝ Աբաս—գեօլցի Մովսիսի Թորոսեան լնդ Եղիսաբէթի, համարուում է անվաւեր։ Յօգուտ Ս. Աթոռոյս պահանջուում է յիշեալ գործակալից 50 ր. տուգանք, ի տեղի վնասուց աթոռահաս արդեանց։

—

15 Փետր. Յովսէփ քահ. Անգեղակոթցի կատարած չհաս պսակի համար ենթարկուում է եկեղեցական ապաշխարութեան 3 տարով Ցաթևի վանքում, պարտաւորուելով կանգնել տաճարի դռանը, առանց փիլոնի և սաղմոս ի ձեռին, պահօք և աղօթիւք քաւելով իւր յանցանքը։ Նորա ժողովրդեան համար ժամանակաւորապէս նշանակուում է այլ քահանայ, բոլոր արդեանց կէսը տալով պատժուած քահանայի ընտանեացը սնունդ, իսկ միւս կէսը հովուող քահանային։

—

22 Փետր. Մոզդոքի հայոց Ս. Նունեան օրիորդական դպրոցի պատուաւոր հոգաբարձու և խնամակալ Պ. Պետրոս Ս. Գեանջումեանց իւր հանգուցեալ կնոջ կտակի համաձայն, Կիսլավոդսկում ունեցած սեպհական տան տարեկան վարձը—600 ռուբլի, տասը տարի ժամանակով նուիրում է յիշեալ դպրոցին, այն պայմանով որ այդ փողերը աւելանան ուսումնարանի անշարժ դրամագլխին և նոցա տոկոսիքը միայն ծախսուի։ Տէր Աստուած ի հաճոյս իւր ընկալցի։

—

24 Փետր. Թիֆլիսաբնակ Ալէքսէյ Ճանջուղազեանց կտակել է 500 ր. Սևանայ վանքին, 500 ր. Ս. Էջմիածնի Գէորգեան հոգևոր ճեմարանին, 500 ր Թիֆլիզի Ներսիսեան Հոգ. դպրանոցին, 500 ր. Թիֆլիսի Գայիանեան օրիորդ. դպրոցին, որ գտնուում Մուղնու Ս. Գէորգ եկեղեցու մօտ։ Տէր Աստուած ի հաճոյս իւր ընկալցի։